Գ 3

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N 11/ 74 -2018

ք. Երևան «13» 03 2018 թ.

ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը, ի դեմս ծառայության տնօրենի տեղակալ Ա. Գ. Հակոբյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Կարկոմավտո» ՍՊԸ** -ն, ի դեմս Ընկերության գլխավոր տնօրեն Ա. Շախմուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է <<Ավտոմեքենաների պահպանման>> ծառայությունների մատուցման ապահովման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **11 000 000** (**տասնմեկ միլիոն**) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն [illegible]ողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա [illegible]ել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:[3]

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[3] *Եթե պայմանագիրը կնքվում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 23-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով, ապա սույն կետից հանվում է 2-րդ նախադասությունը:*

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է __4__ էջից, կնքվում է չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱԱԾ	«Կարկոմավտո» ՍՊԸ
ք.Երևան, Նալբանդյան104	Ք. Երևան, կոմիտասի 47
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի	«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
գործառնական վարչություն	
Հ/հ 900011301067	Հ/հ 217001-094077-001
ՀՎՀՀ 01507079	ՀՎՀՀ 00059627
Տնօրենի տեղակալ	Գլխավոր տնօրեն
Ա. Հակոբյան	Ա. Շախմուրադյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«23» 03 2018 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
11/74-2018

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր			
Շևրոլե-Նիվա և ՈՒԱԶ-Պատրիոտ մեքենաների վերանորոգում և ավտոպահեստամասերի տեղադրում, այդ թվում՝ 50111170/2/13/1 Համաձայն 25.04.2016թ-ի կնքված N 11/93-2016, 06.09.2016թ-ի ԱՊՁԲ-11/102գ-2016 պայմանագրերի			
հ/հ	Ավտոպահեստամասերի անվանումը	Միավորի գինը ՀՀ դրամով	
Հ/Հ	**Ծառայության տեսակ**	**4x4 տիպի Շևրոլե-Նիվա**	**4x4 տիպի ՈՒԱԶ ՊԱՏՐԻՈՏ**
		Միավորի գին	
	SU-1 ներառվող ծառայությունների անվանում՝		
1	Բռնկման համակարգի ստուգում	3760	3760
2	Սառեցման համակարգի ստուգում	1260	1260
3	Յուղման համակարգի ստուգում	1260	1260
4	Արտացման համակարգի ստուգում	1260	1260
5	Կցորդման համակարգի ստուգում	1260	1260
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1260	1260
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1860	1860
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	2520	2520
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	3780	3780
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	3780	3780
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	2520	2520
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	3750	3750
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	2520	2520
14	Թափքի վիճակի ստուգում	2520	2520
15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1260	1260
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում		
16	Շարժիչի հանում և տեղադրում	25200	37200
17	Շարժիչի վերանորոգում	62520	74400
18	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	3720	3720
19	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	3660	6300
20	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	18750	49500

	...արժիչի գլխիկի վերանորոգում		
	Փականի խցուկի փոխարինում	56400	69300
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	15000	30000
24	Հրիչների փոխարինում SOHC	10200	10200
25	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10200	[redacted]
26	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	7500	15000
27	Մխոցային օղակների փոխարինում	23700	43500
28	Թափանիվի հանում և տեղադրում	62520	74400
	<u>*Ղեկավարման, սնման և յուղման համակարգ*</u>	22500	42000
29	Յուղի և յուղի զտիչի փոխարինում		
30	Յուղի պոմպի փոխարինում	1260	1260
31	Ղեկավարման բլոկի վերանորոգում	18750	18750
32	Օդի զտիչի փոխարինում	18750	18750
33	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	1890	2460
34	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	11250	11250
35	Բենզամղիչի փոխարինում	22500	22500
36	Վառելիքի զտիչի փոխարինում	6300	9900
37	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1890	1890
	<u>*Սառեցման և արտածման համակարգ*</u>	12600	12600
38	Հովհարի փոկի հանում և տեղադրում		
39	Հովհարի հանում և տեղադրում	3750	3750
40	Ռադիատորի հանում և տեղադրում	6250	6250
41	Ռադիատորի վերանորոգում	12600	9900
42	Թերմոստատի փոխարինում	6300	12600
43	Ջրի պոմպի փոխարինում	3750	3750
44	Ընդարձակող բաքի փոխարինում	7500	9900
45	Խլարարի հանում և տեղադրում	1250	1250
46	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	3750	3750
	<u>*Կցորդում, ՓՏ և ԱՓՏ*</u>	2520	2700
47	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում		
48	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	3150	3150
9	ՓՏ-ի հանում և տեղադրում	18750	37200
0	ՓՏ-ի վերանորոգում	18750	37200
	<u>*Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ*</u>	12600	37200
1	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում		
2	Բաշխիչ տուփի վերանորոգում	7500	24900
3	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	12500	24900
	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	3150	3720
	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով	2520	2520
	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	4500	4500
		2520	2520

	Առջևի և հետևի կամրջակներ		
	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	18750	37200
58	Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում	12500	37200
59	Առջևի կամրջակի կիսասռնու հանում և տեղադրում	3150	3150
60	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	660	660
	Կախոց		
61	Տրավերսի հանում և տեղադրում	25200	[redacted]
62	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	7500	18600
63	Անվակունդի առանցքակալի փոխարինում	4380	5700
64	Անվակունդի հանում և տեղադրում	2520	4950
65	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	7500	[redacted]
66	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	8700	18600
67	Զսպանակի հանում և տեղադրում	3750	3750
68	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1260	1260
69	Ներքևի լծակի հանում և տեղադրում	5100	[redacted]
70	Ներքևի լծակի վռանների փոխարինում	1260	[redacted]
71	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	1920	2460
72	Միջին ձգանի հանում և տեղադրում	2520	2520
73	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	1920	[redacted]
74	Վերևի լծակի հանում և տեղադրում	2520	[redacted]
75	Վերևի լծակի վռանների փոխարինում	1260	[redacted]
76	Գնդե հոդակապերի փոխարինում	1260	[redacted]
77	Ծայրակաների հանում և տեղադրում	1920	1920
78	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3150	4350
79	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1920	1920
80	Սռնացցի փոխարինում (1 կողմը)	[redacted]	18600
81	Հետևի զսպանակի փոխարինում	1920	[redacted]
82	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	1260	1260
83	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	1260	[redacted]
84	Անվաբացքի կարագավորում	9900	9900
	Ղեկային մեխանիզմ		
85	Ղեկային կալունի հանում և տեղադրում	12600	12600
86	Ղեկային կալունի վերանորոգում	18750	18750
	Արգելակային համակարգ		
87	Գլխ. գլանի հանում և տեղադրում	4500	4500
88	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	12600	12600
89	Բանվ. գլանի հանում և տեղադրում	3150	3150
90	Արգելակային համակարգի օդահանում	1920	1920
91	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	2520	2520
92	Արգելակային փողրակի փոխարինում	1920	1920

	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	1920	2460
	Հետևի կոճղակների փոխարինում	3750	12600
95	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2520	3900
96	Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում տեղադրում	1260	2460
97	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	6300	6300
98	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	5460	5460
	Էլեկտրասարքավորում		
99	Էլեկտրասարքավորման վերանորոգում	12600	12600
100	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	6300	6300
101	Գեներատորի հանում և տեղադրում	3750	3750
102	Գեներատորի վերանորոգում	6300	6300
103	Մեկնարկիչի հանում և տեղադրում	6300	3750
104	Մեկնարկիչի վերանորոգում	6300	6300
105	Առջևի լապտերի հանում և տեղադրում	6300	6300
106	Հետևի լապտերի հանում և տեղադրում	2520	2520
107	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	6300	6300
108	Սաքերի պանելի հանում և տեղադրում	56400	56400
109	Ազդանշանի հանում և տեղադրում	1860	1860
110	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	7500	7500
111	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	12600	12600
112	Ազդանշաային համակարգի տեղադրում	18750	18750
113	Մագնիտոլայի տեղադրում	12600	12600
114	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1920	1920
115	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	25200	25200
116	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	37500	37500
117	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	31260	31260
118	Էլեկտրական տվիչների փոխարինում	2520	2520
119	Էլեկտրական անջատիչների փոխարինում	2520	2520
120	Վառոցքի մոմերի փոխարինում	1920	1920
121	Կոնդիցիոների լիցքավորում	18750	18750
	Այլ ծառայություններ		
122	Ավտոմեքենայի լվացում	3750	3750
123	Անիվի հանում և տեղադրում	660	660
124	Անվադողի վերանորոգում	1260	1260
125	Անիվի բայանսավորում	1260	1260
126	CO-զոդման աշխատանքներ, *գին 1 քառ.սմ - ի համար*	1260	1260
127	Խառատային աշխատանքներ	3750	3750
128	Փականագործի աշխատանքներ	1260	1260
129	Քարշարկի ծառայություն գին *1կմ, համար*	660	660
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի		

	…այուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
	Շարժիչ		
1	Բարձիկ	4200	6300
2	Շարժիչի գլխիկի միջադիր	2100	6300
3	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	7500	18600
4	Շարժիչի բաշխիչ լիսեռ	24600	43500
5	Շարժիչի փական դուրս մղող	2850	2850
6	Շարժիչի փական ներս մղող	2850	2850
7	Շարժիչի փականի խցուկ	1260	1260
8	Ծնկաձև լիսեռ	63000	123900
9	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	690	1260
10	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	1260	1260
11	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	3450	3450
12	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	3450	3450
13	Մխոց	6060	12600
14	Մխոցային օղակներ	10200	12600
15	Ատամնանիվ	3750	4860
16	Շղթա	7500	7500
17	Հիդրոձգան	8750	8750
18	Հրիչ	1920	[redacted]
19	Հիդրոհրիչ	6270	4860
20	Բաշմակ	2760	2760
21	Հանգստարար	2760	2760
22	Թափանիվ	37500	48900
23	Թափանիվի պսակ	8670	13620
24	Շկիվ	27600	27600
25	Շարժաթև	12600	12600
26	Կարտերի միջադիր	1260	1260
27	Միջադիր	3750	3750
	Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
28	Յուղ շարժիչի հանքային, *1 լիտր*	3300	3300
29	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, *1 լիտր*	4260	4260
30	Յուղ շարժիչի սինթետիկ, *1 լիտր*	5760	5760
31	Յուղի զտիչ	1500	1500
32	Յուղի պոմպ	12000	12000
33	Յուղի պոմպի շարժաբեր	2760	2760
34	Վառոցքի մոմ	1650	1650
35	Ինժեկտորի ֆորսունկա	13770	13770
36	Վառելանյութի մղիչ	21300	21300
37	Վառելանյութի զտիչ	1260	1260

	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	2520	4860
	Վառելանյութի փողրակ	7500	7500
40	Աքսելերատորի ճոպան	5550	5550
41	Օդի զտիչ	2520	4350
42	Ջերմաստիճանային տվիչ	2520	2520
43	Յուղի տվիչ	2520	6210
44	Բաշխիչ լիսեռի տվիչ	4950	4950
45	Օդի ծախսի տվիչ	31500	31500
46	Արագաչափի տվիչ	4950	6180
47	Ջրի տվիչ	2760	2760
48	Բենզոբաքի տվիչ	8250	8250
49	Մարման ընթացքի կարգավորիչ	6270	18600
50	Ղեկավարման համակարգիչ	112500	160680
51	Դրոսելային փականի տվիչ	4170	4170
52	Թթվածնի տվիչ	18750	18750
	Սառեցման և արտածման համակարգ		
53	Հովհարի փոկ	10500	10500
54	Հովհար	25200	25200
55	Ռադիատոր	30000	111270
56	Ընդարձակող բաք	4950	9300
57	Ռադիատորի փողրակ	2520	2520
58	Թերմոստատ	6900	6900
59	Ջրի պոմպ	6900	6900
60	Սառեցման հեղուկ 1 լիտր	1920	1920
61	Հոլովակ	6900	6900
62	Փոկ	10500	10500
63	Փոկ կոնդիցիոների	10500	10500
64	Խլարարի ներդիր	1260	2460
65	Խլարարի կախոց	1260	1260
66	Անուր (Խամուտ)	1260	1260
67	Խլարար	37200	37200
68	Վառարանի ռադիատոր	11250	11250
	Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
69	Կցորդման բանվորական գլան	13620	10200
70	Կցորդման գլխավոր գլան	6900	10200
71	Կցորդման տանող սկավառակ	37200	37200
72	Կցորդման տարվող սկավառակ	10530	13620
73	Կցորդման առանցքակալ	10530	12600
74	Կցորդման փողրակ	2520	3420
75	ՓՏ-ի առջևի խցուկ	750	750

	ՓՏ-ի հետևի խցուկ	750	750
77	ՓՏ-ի առանցքակալ	6270	6270
78	ՓՏ-ի առաջնային լիսեռ	22500	49500
79	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	22500	49500
80	ՓՏ-ի եղանիկ	3750	3750
81	ՓՏ-ի ատամնանիվ	18900	30000
82	Համաժամիչ	5100	12600
83	Մուֆտ	9450	18600
84	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	750	750
85	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	2520	2520
86	Հերմետիկ	2520	2520
	Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
87	Բաշխիչ տուփի խցուկ	3030	1500
88	Բաշխիչ տուփի առանցքակալ	6270	6270
89	Բաշխիչ տուփի ատամնանիվ	18750	18750
90	Բաշխիչ տուփի լիսեռ	25200	49500
91	Կարդանային լիսեռ	86700	86700
92	Էլաստիկ մուֆտ	7500	7500
93	Կարդանային լիսեռի խաչուկ	6300	6300
	Առջևի և հետևի կամրջակներ		
94	Ռեդուկտոր	186000	[redacted]
95	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	49500	80400
96	Դիֆֆերենցիալ	25200	30300
97	Դիֆֆերենցիալի սատելլիտ	6270	6270
98	Տանող ատամնանիվի խցուկ	3030	1500
99	Տանող ատամնանիվի առանցքակալ	6270	9900
100	Դիֆֆերենցիալի առանցքակալ	6270	6270
101	Կիսաառնի	52500	52500
102	Կիսաառնու առանցքակալ	4950	4950
103	Կիսաառնու խցուկ	750	750
104	Կարգավորիչ տափողակ	600	600
	Կախոց		
105	Տրավերս	124500	[redacted]
106	Կրոնշտեյն	5100	5100
107	Ձախ կամ աջ հոդակապ	69000	49500
108	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	1260	[redacted]
109	Անվակունդ	15000	20100
110	Անվակունդի խցուկ	750	1260
111	Անվակունդի ներքին առանցքակալ	3750	6270
112	Անվակունդի արտաքին առանցքակալ	3750	6270

	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	840	[redacted]
114	Զսպանակ	12600	12600
115	Առջևի հարվածամեղմիչ	13620	13620
116	Հարվածամեղմիչի վռան	330	330
117	Ներքևի լծակ	37500	37500
118	Ներքևի լծակի վռան	2730	[redacted]
119	Վերևի լծակ	37500	[redacted]
120	Վերևի լծակի վռան	840	[redacted]
121	Գնդե հոդակապ	6270	[redacted]
122	Սռնացից	[redacted]	5700
123	Սռնացցի պղնձե վռան	[redacted]	2100
124	Առջևի կայունարարի վռան	840	1860
125	Հետևի զսպանակ	12600	[redacted]
126	Հետևի ցնցամեղմիչ	13620	13620
127	Հետևի մետաղաձող (շտանգա)	6270	6270
128	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	390	390
129	Աջ կամ ձախ ձգան	8700	15000
130	Ծայրակալ	5100	6900
131	Ձգան մեջտեղի	9900	15000
	Ղեկային մեխանիզմ		
132	Ղեկային կալուն	225000	225000
133	Ճոճանակ	15000	[redacted]
134	Ճոճանակի վռան	840	[redacted]
	Արգելակային համակարգ		
135	Գլխ. գլան	18750	18750
136	Վակուումային ուժեղարար	50000	50000
137	Բանվ. գլան	3150	6600
138	Արգելակային փողրակ	3450	3450
139	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	5700	10620
140	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	9900	37200
141	Առջևի արգելակային սկավառակ	13800	21000
142	Ձեռքի արգելակի ճոպան	7500	7500
143	Հետևի արգելակային թմբուկ	13750	21000
144	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	1200	1200
	Էլեկտրասարքավորում		
145	Գեներատոր	56250	56250
146	Գեներատորի դիոդային կամրջակ	6900	6900
147	Գեներատորի ռելե	3750	3750
148	Գեներատորի առանցքակալ	1260	1260
149	Ստարտեր	48000	48000

[illegible]	Ստարտերի ռելե	2100	2100
151	Ստարտերի ածուխ	5100	5100
152	Բենդեքս	8250	9300
153	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	8250	9300
154	Լամպ	2520	2520
155	Էլեկտրական անջատիչ	2520	2520
156	Էլեկտրական տվիչ	27600	27600
157	Էլեկտրական չափիչ սարք	55800	55800
158	Բռնկման կողպեք	21000	21000
159	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	51000	51000
160	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	51000	51000
161	Վառոցքային լարերի խուրց	6900	6900
162	Վառոցքի Կոճ	22200	30000
163	Ազդանշան	3750	3750
164	Ապակելվացիչ	1920	1920
165	Ապակելվացիչի շարժիչ	2520	2520
166	Դռների կենտրոնական փական	18750	18750
167	Ազդանշանային համակարգ	18750	18750
168	Մագնիտոլա	51000	51000
169	Էլեկտրաամբարձիչ	12600	12600
170	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	18750	18750

Ծառայության մատուցման ժամկետը

սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից	15.12.2018

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Կարկոմավտո» ՍՊԸ
Ք. Երևան, կոմիտասի 47
«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/հ 217001-094077-001
ՀՎՀՀ 00059627

Գլխավոր տնօրեն

Ա. Շախմուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
«23» 03 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
11174-2018

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111170/2/13/2	Ավտոմեքենաների պահպանման ծառայություններ	1 100 000	2 200 000	3 300 000	4 400 000	5 500 000	6 600 000	7 700 000	8 800 000	9 900 000	11000000	11000000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱԱԾ
ք.Երևան, Նալբանդյան104
ՀՀ Ֆին. նախ. աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/հ 900011301067
ՀՎՀՀ 01507079

Տնօրենի տեղակալ

Ա. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Կարկոմավտո» ՍՊԸ
Ք. Երևան, կոմիտասի 47
«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Հ/հ 217001-094077-001
ՀՎՀՀ 00059627

Գլխավոր տնօրեն

Ա. Շախմուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴՐԱՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն